№ 83 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 19 **1898** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 19 № 83

ԹԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ **1898** ԹՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(26-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՓԵՏՐՎԱՐԻՑ «ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՑԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՑԱՋՈՐԴ ՕՐԵՐԻՑ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., մի ամսվանը՝ 1 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆԷ (Բաղդատայա և Բարձունկայա փողոցների անկիւնը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով։ Բառին վճարվում է 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլօ-ամերիկական դաշնակցութիւն. Համաշխարհային ցաւակցութիւն Գլադստոնի մահվան առիթով.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաղդիից. Նամակ Թմբագրութեան. Նամակ Թմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պատերազմ. Նամակ Ամերիկայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ԱԱՃՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի զրոյցներ.

ԱՆԳԼՕ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

—

Անգլիական այժմեան կառավարութեան անդամներից մէկը, կօլօնիաների մինիստր Չեմբերլէն, վերջերումս արտասանած մի ճառի մէջ մի շարք խիստ կարծիքներ յայտնելով ռուսաց քաղաքականութեան վերաբերմամբ, որ զգալի հարուածներ հասցրեց Անգլիայի շահերին մանաւանդ չինական հարցում, չը թագցրեց այն հանգամանքը, որ Անգլիան մենակ է և այդ մենակութիւնը չէ թոյլ տալիս նրան պաշտպանել իր կենսական շահերը։ Պէտք է դաշնակից գտնել։ Բայց ո՞ւր որոնել։ Եւրոպայի հինգ մեծ պետութիւնները արդէն համախմբվել են երկու ահաւոր բանակների մէջ, որոնք հակառակ լինելով միմեանց հիմնական նպատակներում՝ պատրաստ են միանալ՝ Անգլիայի դէմ գործելու համար։ Մայրագոյն Արևելքում նաև Նենայ երեքպետեան և երկպետեան դաշնակցութիւններից։

Անգլիական մինիստրի յայտարարութիւնը այս միաքն ունէր։ Եւ բնականաբար, նա մեծ ազմուկ յարուցեց Եւրոպայում, դառնալով քաղաքական մամուլի դատողութիւնների, զուշակութիւնների առարկայ։ Կարելի է ասել, որ Չեմբերլէնին ամբողջ Եւրոպան համարեա միաբերան պատասխանեց. «Այդ դաշնակցութիւնը չի լինիլ։ Եւ չի լինի ոչ թէ այն պատճառով, որ Ամերիկայի և Անգլիայի շահերը տարբեր են, կամ ցեղական, պետական, աշխարհագրական առանձնայատկութիւնները արգելք կը դնեն։ Ո՞չ։ Այդ մասին կասկածներ շատ քիչ կան։ Անգլօ-ամերիկական դաշնակցութիւնը չի լինի այն պատճառով, որ Եւրոպան թոյլ չի տայ։ Դա կը լինէր Եւրոպայի շահերի դէմ, որովհետև Եւրոպան ուզում է, որ Անգլիան մենակ մնայ, հետևաբար թոյլ։ Ո՞րտեղից առաջ եկաւ քաղաքական այս նոր իմաստութիւնը։ Ֆրանս-պրուսական պատերազմից յետոյ Եւրոպան տենդային եռանդով զինվում է, պատրաստվում, դաշնակցութիւններ է կազմում և ամեն մի պետութիւն ազատ իրաւունք ունէր եղբայրանալ ում հետ կամենում էր։ Իսկ այժմ, երբ այդ պետութիւններից մէկը կամենում է նոյնպէս դաշնակցութիւն կազմել իր ոյժը մեծացնելու համար, ամեն կողմից լսվում են ատամների կրճտոց, զայրոյթ և սպառնալիքներ։

Միջազգային իրաւունքի տեսակէտից այդ դիմադրութիւնը, որ Եւրոպան այժմ ցոյց է տալիս մամուլի բողոքներով, որ և է հիմք չունի։ Անգլիան անկախ պետութիւն է և նրան ոչ ոք իրաւունք չունի արգելել անել այն, ինչ նա ուզում է իր շահերի համար, ինչպէս ոչ ոք ոչինչ չէ կարող ասել, եթէ Անգլիան այսօր միանայ երեքպետեան կամ երկպետեան դաշնակցութեան։ Էլ ինչո՞ւ համար են այդ աղմուկները։ Դրութիւնը կը պարզվի, եթէ նկատի ունենանք, որ անգլօ-ամերիկական դաշնակցութիւնը, բացի նրանից որ երևան կը հանէր միջազգային գործերի մէջ մի շատ պատկառելի ոյժ, Եւրոպական շահերի շրջանը կը մոցներ ամերիկական մեծ հանրապետութիւնը և միջոց կը տար նրան իր վճռական ձայնն ունենալ համաշխարհային հարցերի մէջ. ուրիշ խօսքերով, Եւրոպան իր շահերին և օգուտներին մասնակից կանէր մի նոր մեծ պետութիւն։ Ահա այդ ընկերակցութիւնը չէ ուզում Եւրոպան։ Նա ուզում է, որ աշխարհը միայն իրան պատկանէ։ Այժ տալ մի նոր մարմնի, որ նա էլ հաւաքէ, հնձէ—դա հակառակ է վաճառականական այն տեսակէտներին, որոնք ազգերի նոր դասանքն են կազմում։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԳԼԱԴՍՏՈՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Ոչ միայն Անգլիայում, ուր սուգը ընդհանուր է, այլ և ամբողջ Եւրոպայում օրվայ խնդիրը մեծ ծերունու մահն է։ Անգլիական լրագիրները մեծ մասամբ դուրս են գալիս սև շրջանակով և ամբողջապէս նուիրված են մեծ հանգուցեալին։ Գլադստոնի ընտանիքը ցաւակցութեան անթիւ հեռագիրներ է ստանում։ Այդ ցաւակցութիւնը համաշխարհային է։ Առաջին հեռագիրների թըվում ստացել են ցաւակցական հեռագիրներ՝ Թագաւոր Կայսրից, Վիկտորիա թագուհուց, Ֆրանսիական հանրապետութեան նախագահից, Միացեալ Նահանգների նախագահից և Վիլհելմ կայսրից։

Թագաւոր Կայսր Նիկոլայ II հեռագրեց տիկին Գլադստոնին հետևեալը. «Այս բոպէիս ստացայ Գլադստոնի մահվան ցաւալի լուրը և իմ պարտքս եմ համարում արտայայտել ձեզ իմ ամենաանկեղծ ցաւակցութիւնը ձեր կրած անփոխարինելի կորստի համար, ինչպէս և խորին ափսոսանքս տխրալի դէպքի առիթով։ Ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը պէտք է ողբայ այդ մեծ պետական գործիչի կորուստը, որի քաղաքական հայեացքները այնքան լայն, այնքան մարդասէր, այնքան խաղաղասէր էին»։

Վիկտորիա թագուհին հեռագրեց հանգուցեալի աղջկան. «Ես խորին կերպով վշտացած եմ տխրալի լուրով։ Բէաթրիչան և ես արտայայտում ենք ձեր մորը և ձեզ մեր ամենախորին ցաւակցութիւնը»։

Գերմանական այրի կայսրուհի Վիկտորիան հետևեալ հեռագիրն է ուղարկել տիկին Գլադստոնին. «Ընդունեցէք իմ սրտագին ցաւակցութեան արտայայտութիւնը. ես խոր կերպով ցաւակցում եմ ձեզ և ձեր աղջկերանց»։

Ֆրանսիական հանրապետութեան նախագահը հեռագրեց. «Ես իմացայ ձեր կրած մեծ կորուստը և կամենում եմ ձեր վշտին միացողների մէջ առաջիններից մէկը լինել։ Միստրը Գլադստոնը ազատութեան մասին ունեցած իր վեհ հասկացողութեամբ և իր քաղաքական իդէալի այնու

թեամբ՝ ամենամեծ ծառայութիւններ է մատուցել իր հայրենիքին և մարդկութեան։»

Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Մակ Կինլէյ հեռագրեց Գլադստոնի ընտանիքին. «Յայտնում եմ ձեզ ամերիկեան ժողովրդի համակրութիւնը և վիշտը այն կորստի համար, որ ունեցաք ի դէմս այն անձի, որ ժամանակակից պետական նաւի ամենանշանաւոր ղեկավարներից մէկն է հանդիսանում։»

Չինաց կայսրի դեսպանը հեռագրում է. «Մեծ համակրութիւն ձեզ և ձեր ընտանիքին ձեր վշտի մէջ՝ այն անձի մահվան առիթով, որ մի վեհան էր հարստահարութեան դէմ և արդարութեան ու մարդկայնութեան նշանաբան։»

Գլադստոնի թաղման օրը դեռ որոշված չէ. Նրա մարմինը առ այժմ դրված է դագաղում և փաթաթված է «խաղաղութեան տաճարը», այսինքն Գլադստոնի սեփական մատենադարանի սենեակը, որտեղ մեծ ծերունին անց էր կացնում քաղաքական գործերից ազատ ժամերը։ Նրա որդիներից մինը, Սուիֆէն Գլադստոն, յայտնել է մամուլի միջոցով, թէ իր հայրը կենդանութեան ժամանակ մի քանի անգամ ցանկութիւն է յայտնել, որ իր դագաղի վրա ծաղիկներ չը դրվեն և ընտանիքը կամենում է կատարել նրա այդ ցանկութիւնը։ Ինչպէս յայտնի է, թաղումը պիտի կատարվի պետութեան հաշիվ. ծախս նշանակված է 700 հազար բուբլի։ Հանգուցեալի մարմինը պիտի ամփոփվի Վեսթմինստրեան արքայութեան մէջ, ինչպէս ազգային յարգանքի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մայիսի 5-ին

«Մշակի» № 71 մէջ, պ. Դաքեան պաշտպանելով պ. Թ. Մալումեանի քահանայական հարցին վերաբերեալ յայտնած մտքերը, ասելացնում է. «Թողէք որ ասպարէզը միայն տգէտներին մնայ, թողէք որ ժողովուրդը վերջնականապէս համոզվի նրանց բարոյական անկման և վնասակարութեան մէջ և վերջնականապէս զզվի ու երես դարձնի նրանցից, այն ժամանակ լաւն ասպարէզ կը բացվի արժանաւորների առաջ»։

Մեր կարծիքով, այդ խօսքերը մի ուրիշ լուսաւորված ազգի վերաբերմամբ գուցէ և շատ ճիշդ լինեն, բայց հայերի նման մի ազգէտ ժողովրդի վերաբերմամբ սխալ են։ Որպէս զի ժողովուրդը վերջնականապէս զզվի ու երես դարձնի տգէտներից, պէտք է որ այդ ժողովրդի մտաւոր մակերևոյթը բարձրանայ։ Հակառակ դէպքում մենք ինչ իրաւունք ունենք կարծելու, որ այն ժողովուրդը, որը ամբողջ դարերի ընթացքում չէ զզվել, այսուհետև կը զզվի և երես կը դարձնի տգէտ հոգևորականներից։ Պատճառը հետևեալն է։ Ոչ ոք, մի ժողովուրդ թէ մի անհատ, չէ կարող գաղափար ունենալ լաւի մասին, քանի որ նա չը գիտէ, թէ ինչ բան է վատը։ Մեր ժողովուրդը դարերի ընթացքում տեսած լինելով միայն տգէտ և բարոյապէս ընկած քահանաներ, չէ կարող երևակայել, թէ կարող են լինել և կրթված ու բարոյապէս աւելի բարձր քահանաներ, մի խօսքով չէ կարող հասկանալ, թէ քահանան կարող է ուրիշ կերպ լինել, քան թէ ներկայումս։ Հետևաբար, նա գաղափար չունենալով լաւ քահանայի մասին, երբէք էլ երես չի դարձնի վատից, այլ ընդհակառակը, հաւանական է, որ ինքը ժողովուրդը բարոյապէս էլ աւելի ընկնի, ընտրելու տգէտ և բարոյապէս ընկած քահանաներին։ Մենք ճանաչում ենք ամբողջ մի գաւառ՝ Գեոբչայի գաւառը, որի բազմաթիւ հայ գիւղերից և ոչ մէկը չունի կրթված քահանայ։ Եւ մենք մօտ ճանաչելով խաւարում խարխափող այդ ժողովուրդը, երբէք չենք կարող երևակայել, թէ այդ ժողովուրդը վերջնականապէս կը զզվի տգէտ քահանաներից և իսպառ երես կը դարձնի նրանցից։ Այդպիսի բան կարող է տեղի ունենալ միայն և միմիայն այն դէպքում, եթէ այդ ժողովուրդը կրթվի, լուսաւորվի ու կարող լինի ջոկել լոյսը խաւարից, լաւը վատից։ Իսկ այն ժամանակ էլ, չէ որ կրթված քահանաների կարիք էլ չի լինի բոլորովին։ Կրթված քահանայ հարկաւոր է այժմ, երբ ժողովուրդը տգէտ է։

Ա. Ամիրեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ներքին-Ախտա, մայիսի 13-ին

Երէկ, ստանալով «Մշակի» խմբագրութեան կողմից ուղարկված 45 բ., որը նուիրել է պ. Մատթէոս Փիլոեանց, դնեցի ցորեն, գարի և ալիւր և բաժանեցի հետևեալ չքաւոր ընտանիքներին. 1) վատառես Աւետիս Սահակեանցի ընտանիքի անդամներին (8 հոգի). 2) կոյր Սիմոն Գէորգեանցի ընտանիքին (7 հոգի). 3) Հիւանդ Մխիթար Առաքելեանցի ընտանիքին (8 հոգի), 4) այրի Մարիամ Թումասեանցի որբերին և 5) Նիկողոս Կարապետեանցի ընտանիքին (9 հոգի)։ Ստացականները ներփակած ուղարկվում են խմբագրութեան։ Պէտք է ասել, որ տեղական չքաւորների թիւը այնքան մեծ է, որ մարդ խղճահարվում էր, թէ նուէրը որին տալ, կամ որին թողնել։ Հենց այդ պատճառով, յիշեալ նուէրը՝ փոխանակ 3 ընտանիքի՝ բաժանեցինք 5-ի վրա։ Այդ հինգ չքաւոր ընտանիքները իրանց խորին շնորհակալութիւնն են յայտնում թէ յարգելի խմբագրութեան և թէ պ. Մ. Փիլոեանցին։

Գ. Սինանեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մայիսի 16-ին

«Մշակի» № 79-ի մէջ տպված մի նկատողութեան առիթով, որ վերաբերում է ինձ, խնդրում եմ տպել հետևեալը։—

Հօրս մահից յետոյ (1884 թ.) մինչև այսօր՝ ամբողջ ծախսը, այլ և վճարել եմ նրա թողած բոլոր պարտքերը։ 1884 թվից մինչև 1893 թ.՝ ամսական 100—125 ր. եմ տուել մօրս, քրոջս և եղբօրս ապրուստի համար։ 1893 թ. քրոջս ամուսնացրի իմ հաշիվ. այնուհետև, մինչև 1895 թ. վերջերը ես տուել եմ մօրս և եղբօրս ամսական 100 ր։ Իսկ երբ 1895 թ. վերջին վախճանվեց եղբայրս, և մայրս մնաց մենակ, ես նրան առաջարկեցի ապրել երկու աղջիկներից մէկի մօտ՝ իմ հաշիվ։ Նա մերժեց իմ առաջարկութիւնը. մեծ քրոջս հետ խորհուրդ անելով՝ բաւական համարեցինք տալ նրան 30 ր. ամսական, որ և մինչև այսօր ստանում է ամենականոնաւոր կերպով։ Այս բոլորը ես կարող եմ հաստատել մերձաւոր ազգականներիս վկայութեամբ և մօրս տուած ստացականներով։

Թէ ինչի վրա է հիմնված մօրս բողոքը, որը բոլորովին յուզաշրջված էր հաղորդված, ես չը գիտեմ, և թէ ինչով կը վերջանայ, հրաժարվում եմ առաջուց վճռել։ Սակայն առ այժմ այս կասեմ, թէ՝ այդ բողոքը ունի շանտաժի բնաւորութիւն, որով կամենում են ինձ վախեցնելով աւելացնել տալ մօրս տարեկան։ Իմ ազգականներից ոմանք, նշանարան ունենալով «ինչ որ իմն է՝ իմն է, ինչ որ քոնն է՝ այն էլ իմն է» («все мое—мое, все твое—мое»), ահա մի տարի է՝ ինչ ամեն կերպ աշխատում են այդ նպատակին հասնել, բայց աջողութիւն չը գտնելով՝ դրդել են մօրս գատարան դիմել։ Եւ մինչև գործի քննվելը նոյն ազգականները աշխատում են ազդակ բարձրացնել մամուլի մէջ, թէ՝ տեսէք, այս ինչ յայտնի և հարուստ բժիշկը ապրուստի միջոց չէ տալիս իր հիւանդ մօրը, գործը պէտք է քննվի այնքան, և այն, հարկաւ նպատակ ունենալով վարկս զցելու հասարակութեան աչքում, և այդ կերպով ստանալ ինձանից ըստ ռուսական առածի՝ если не мытьемъ, то катаніемъ, բոլորովին մոռանալով, որ իրանք, ազգականները, արդի ծառայութիւն արին մօրս և իրանց կեղծաւոր ջանքով իւղ ածեցին կրակի վրա, որով աւելի լարեցին մեր յարաբերութիւնները, որ առանց այն էլ լաւ չէին։ Ժամանակը ինքը ցոյց կը տայ, թէ որքան հիմնաւոր է յիշեալ բողոքը, և ինչ դուրս կը գայ նրանից։ Իսկ ես անհամբեր սպասում եմ գործի քննութեանը։

Բժիշկ Ե. Մարկոսով

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ անբերրիութիւնից վնասված գիւղերի մասին այժմ ժողովում են մանրամասն տեղեկութիւններ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ։ Այդ տեղեկութիւններից երևում է, որ Երևանի նահանգապետը դեռ դեկտեմբեր ամսին՝ իր հաղորդագրութեան մէջ, որ ուղարկել էր ընկերութեան, մատնանիշ էր անում հացի գնի բարձրանալը Երևանեան նահանգի մի քանի տեղերում, բացատրելով Նրանով, որ անբաւարար հունձ է ստացվել մի քանի տեղերում։

—

Ցաղատ կարօտ հայ ուսանողների բաժանք՝ 1) Թիֆլիսից, Մի տիկին՝ 2 ր., 2) Երևանից, Տիգրան Մէլիքեանցի միջոցով, հանգանակված 38 բուբլի, որ նուիրել են. տիկին Վ. Սաղումեան՝ 6 ր., տ. Թ. Անդրէասեան՝ 5 ր., տ. Ա. Ազիզեան՝ 3 ր., Ոմն՝ 3 ր., տ. Փ. Կարապետեան՝ 2 ր., տ. Ս. Ղարիբեան՝ 2 ր., տ. Ե. Ազիզեան՝ 2 ր., օրիորդ Ս. Բարաջանեան՝ 2 ր., Ե. Ե. 2 ր., տ. Ա. Մուսինեան՝ 2 ր., տ. Ա. Եղիազարեան՝ 1 ր., Գ. Մնացականեան՝ 1 ր., Գ. Տէր-Թաւաթեան՝ 5 ր., Ե. Տէր-Աւետիքեան 2 ր., 3) Ալէքսանդրոպոլից, Ալէքսանդր Տէր-Սարգսեանցի միջոցով, 53 բուբլի, որ հանգանակել են մի ճաշկերոյթի ժամանակ։ Նուիրողներն են՝ Ա. Տէր-Սարգսեանց՝ 5 ր., Ց. Քեանդարեանց՝ 5 ր., Ա. Ասոմեան՝ 1 ր., Ց. Ասմարեան՝ 1 ր., Եղբարք Կարանեաններ՝ 4 ր., Ա. Ցոլհանջանեան՝ 5 ր., Եղբարք Կուղիկեաններ՝ 4 ր., Մի ոմն՝ 1 ր., Եղբարք Գեոդակեաններ՝ 3 ր., Մ. Ստամբոլցեան՝ 1 ր., Դ. Գրիգորեան՝ 1 ր., Գ. Տօնականեան՝ 1 ր., Եղբարք Ղազրիմալեանք 15 ր., Ց. Էնրամէեան՝ 6 ր։ 4) Կարսից, Զ. Դամբաղեանի միջոցով 12 ր., հանգուցեալ Խաչատուր Մառանկոզեանցի հոգեհանգստից մնացած, որ նրա համակրողները նուիրում են ի յիշատակ հանգուցեալի։ 5) Թեոդոսիոպոլից (Պարսկաստան), Լեոն Ներսէսեանցի և Ցոլհաննէս Ղահրամանեանցի միջոցով 40 բուբլի, որ նուիրել են՝ Անցեալ 5 ր., Պօղոսեան ընկ. 5 ր., Ա. Կարապետեանց 3 ր., Գրիգոր Մէլիք-Աբրահամեանց 4 ր., Նասիբեանց 2 ր., Սարուխանեանց 2 ր. 50 կ., Ս. Նազիրեանց 2 ր. 50 կ., Միրզայեանց 2 ր., գործակատար 2 ր., Ա. Յակոբեանց 2 ր., Թ. Մովսէսեանց 2 ր., Պ. Զանուսեանց 2 ր., Վաղարշակ Սիմոնեանց 1 ր., Արշակ Սիմոնեանց 1 ր., Ոմն 1 ր., Ոմն 1 ր., Ոմն 1 ր., Թ. Խաչիեանց 1 ր., Գ. Աւետիսեանց 1 ր։ Գումարն է 40 ր։ Ուրեմն մեզ մօտ մինչև այժմ կայ ընդամենը՝ 581 ր. 90 կոպէկ։

—

Ուրբաթ, մայիսի 15-ին, Թիֆլիսի Նահանգական դատարանում քննվեց մի փոքրիկ դրական գործ, որի էութիւնը հետևեալն է։ Կաղզուանցի մի պարոն, Սարգսեան, դանդատ էր տուել նոյն քաղաքի բնակիչ, «Մշակի» թղթակից Մ. Ղազարեանցի դէմ, Նրա մի թղթակցութեան առիթով։ Գուցէ ընթերցողները յիշում են, որ պ. Ղազարեանի և բժ. Կաճկաճեանի մէջ փոքրիկ բանակռիւ կար Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի առիթով։ Պատասխանի մէջ պ. Ղազարեան այն մտքը յայտնելով, որ բժ. Կաճկաճեան, իբրև վարչութեան նախագահ, փողերը պէտք է բաժանէր անդամների միջոցով, մեղադրում էր Նրան, որ Նա փողերի բաժանումը յանձնել էր մի «անվստահելի անձնաւորութեան»։ Եւ ահա պ. Սարգսեան դանդատ է տուել դատարանին, յայտնելով, որ «անվստահելի անձնաւորութիւն» բառերի տակ թղթակիցն իրան է ի նկատի ունեցել, խնդրելով պատասխանատուութեան ենթարկել Նրան։ Գանդատաւորի առաջարկութեամբ, կանչված էին մի քանի վկաներ։ Սկզբում դատարանն առաջարկեց կողմերին հաշտվել, որը սակայն տեղի չունեցաւ։ Այդ դատարանը վճռեց՝ անհետևանք թողնել պ. Սարգսեանի դանդատը։ Պ. Ղազարեանին պաշտպանում էր երդվեալ հաւատարմատարի օգնական Տ. Յովհաննիսեանցը։

—

Ուրբաթ, մայիսի 15-ին, Կօրշի խումբը ներկայացրեց, ի նպաստ տ. Միրզոյանի, Վ. Ալէքսանդրովի «Նոր բնակարան» դրաման։ Վ. Ալէքսանդրով մտադրութիւն է ունեցել շարադրել մի զօրեղ մելոդրամա՝ լի յուզիչ և աղեկոտ տեսարաններով, այնպէս որ, եթէ Նրան աջողված լինէր իրագործել իր մտադրութիւնը, ուրբաթ օրը ներքևում նստած հանդիսատեսները պէտք է հոլանոցներով պաշտպանվէին վերևից թափվող արտասուքներից։ Բայց, բարեբաղդաբար, թէ դժբաղդաբար, հեղինակների ընդունակութիւնները առհասարակ աւելի համեստ են լինում, քան դիտաւորութիւնները և ուրբաթ օրվայ ներկայացումը անցաւ առանց արտասուքների ցրհեղեղի։ Թօսել դերասանների խաղի մասին այդպիսի պիէսայում չարժէ, թէև չենք կարող չը նկատել, որ բենեֆիցիանտուհին նորից ապացուցեց, որ ունի աչքի ընկնող բեմական արժանաւորութիւններ և կարող է իր խաղով մեծ գեղարուեստական հաճոյք պատճառել հասարակութեան, չը նայելով նոյն իսկ արտասական տեմպերամենտի թուլութեան, որ պէտք է համարել այդ վերին աստիճանի շնորհալի դերասանուհու միակ պակասութիւնը։ Հասարակութիւնը վարձատրեց բենեֆիցիանտուհուն երկարատև ծափահարութիւններով և բազմաթիւ ընծաներով, որոնց թւում կային և թանգագին իրեր։ Իսկ յաջորդ օրը, մայիսի 16-ին, Կօրշի խումբը ներկայացրեց Գուցկովի յայտնի «Ուրիէլ Ակոստա» դրաման։ Խաղը ընդհանրապէս թոյլ էր։

գելի բժ. Զաքարեանը իր մի աշխատութեան մէջ ասում է. «Ամեն մի պայման, որ չէ հակասում այդ նպատակին (այսինքն առողջ ու զօրաւոր սերունդ առաջացնելու), օրինաւոր է և չէ կարող արգելք լինել ամուսնութեանը։»

Այստեղից ընթերցողը կարող էր եզրակացնել, որ պ. Զաքարեանը թոյլ կը տար ամուսնութիւն արենակից ազգականների մէջ, եթէ համոզված չը լինէր նրա կորստաբեր ազդեցութեանը սերունդների վրա, մի համոզմունք, որը (ինչպէս տեսանք) սակայն հաստատ գիտական հիմք չունի։

Դառնալով դէպի ինամակցական ազգակցութեանը, յարգելի բժիշկն ասում է. «Ինամէութեան և հոգևոր ազգակցութեան (սանահայրութեան, հոգեհայրութեան և այլն) բոլոր աստիճաններում կատարված ամուսնութիւնները ոչ միայն օրինաւոր, այլ երբեմն մինչև անգամ գերագասելի են։ Այսպէս, օրինակ, այրի մարդու համար աւելի գերագասելի է պսակվել իր քեռու հետ, որը անշուշտ աւելի զուտ և ինքնամք կարող է ունենալ իր քրոջ որբերի վրա, քան թէ օտար կինը։ Առողջապահութեան տեսակէտից նոյնպէս ոչ մի արգելք չէ կարող լինել, երբ երկու եղբայրները պսակվում են երկու քոյրերի հետ, կամ երբ մէկը ամուսնանում է իր խորթ մօր նախկին ամուսնուց ծնած աղջկայ հետ և այլն։»

Պ. Զաքարեանի այս կարծիքի դէմ դժուար է վիճել սոսկ գիտական, կամ աւելի ճիշդ ֆիզիոլոգիական տեսակէտից։ Բայց այդ տեսակէտը միակը չէ բանական մարդկանց մէջ և հին ու նոր օրէնսդիտները այդ տեսակէտով չէին ղեկավարվում, երբ խիստ, երբեմն և չափազանցված օրէնքներ էին սահմանում արենակցական և ինամական ամուսնութիւնների դէմ։ Այսպիսի կանոններ գոյութիւն ունէին հին դարերում ևս, երբ դեռ յայտնի չէին այն գիտական հայեացքները և փաստերը, որոնց վրա հիմնվելով բժիշկը արգելում է մօտ արենակիցներին իրար հետ ամուսնանալ։ Շնորհիւ այն բազմաթիւ եկեղեցական կանոնների, որոնցով նզովվում է արիւնախառնութիւնը, ժողովրդի մէջ դարերի ընթացքում սրբացել է ազգակցութիւնը։ Այն անարատ զգացմունքը, որը տածում են մօտ ազգականները դէպի միմեանց, ոչ մի ֆիզիոլոգիական և անատոմական հիմք չունի։ Նա զարգացել է ընտանեկան կեանքում և ամրապնդվել է կամաց-կամաց, դարերի ընթացքում, օրէնսդրութիւնների, իրատների, կրօնական ծէսերի ներշնչման ներքոյ,—նոյն ձևով, ինչ ձևով որ աճել և զօրեղացել են մեր մէջ բարին, բարոյականութեան, երախտագիտութեան, ամօթխածութեան և հարիւր ուրիշ տեսակ զգացմունքներ։ Այս մի հիանալի է, բայց հիանալի է նոյնպէս և ծնողներին յարգելը, շորեր հագնելը։ Այս նոյն հիանալի զգացմունքը, նոյն կրօնական—բարոյական ներշնչումն է, որ եղբայրացրել և արենակից է դարձրել գոնէ մեզ՝ հայերիս համար խնամութիւնը և հոգևոր ազգակցութիւնը։—Աստիկը—քաւորի, քէնին—փեսայի, խաչեղբայրը—հարսի աչքին անմերձենալի և անողոքելի են։ Այս բարոյական կապն է, որ պահպանում է հայ բազմանդամ տների մաքրութիւնը—տներին, որտեղ ապրում են երեք-չորս սերունդներ։ Ինչ կը դառնար բարը ու վարքի մաքրութիւնը, եթէ խլենք նրանցից այս բարոյական կապը։ Չէ որ ընտանիքը կը դառնար անբարոյականութեան մի բոյ։

Ճշմարիտ է, հին, վայրենի ազգերը, հին պարսիկները չէին քաշվում ամենամօտ ազգակիցների հետ անգամ ամուսնանալուց,—եղբայրը պրսակվում էր քրոջ հետ, մինչև անգամ ծնողը զաւակի հետ։ Կլեոպատրան եղբօր ու քրոջ ամուսնութեան ծնունդն էր, իսկ Ագրիպպինան հասել էր այն զազրելի անբարոյականութեան, որ տարփական հայեացք էր ձգել իր որդի Ներոնի վրա։ Լուսաւորութիւնը յեղափոխել է մարդկանց հայեացքները բարոյականութեան վրա։ Մովսէսը, Մահամմէդը խստօրէն արգելում են արենակցական ամուսնութիւնը։ Զարանը արգելում է կին առնել մօրը, աղջիկներին, քոյրերին, հօրա—և մօրաքոյրերին, քրոջ և եղբօր աղջիկներին, կանաչաքոյրերին, կնոջ աղջիկներին, որոնք ձեր խնամատարութեան ներքոյ են դաստիարակվում, իսկ Մովսէսը պատուիրում է սպանել ժողովրդի առաջ այն մարդուն, որը յարաբերութիւն ունի իր հօր ու մօր աղջիկների հետ։

Այսպէս ուրեմն, օրէնսդիրներին ղեկավարող սկզբունքը եղել է ընտանեկան մաքրութիւն պահպանելը։ Նրանք հասկացել էին, որ արգելելով օրինաւոր ամուսնութիւնը, նրանք կը ներշնչեն մոլութիւնը, դէպի ազատ սէրը ազգակիցների մէջ։ Բիբլիոն իրաւացի նկատում է, որ «ընտանիքի և հասարակութեան փրկութեան համար անհրաժեշտ է, որ մի քանի պորտերի միջից հեռու մղվի սիրոյ կիրքը։ Պէտք է արգելել ամուսնութիւնը այն աստիճանի ազգականների մէջ, որոնցից մեծերը փոքրերի համար կարող են փոխարինել ծնողներին, իբրև խնամատարներ, կամ հոգաբարձուներ։ Բայց այս հնարաւոր է միմիայն այն դէպքում, երբ օրէնքը, աւելի ևս ծէսերն ու սովորութիւնները այնպիսի յարաբերութիւններ կամ վերաբերումն են ստեղծում ազգականների մէջ, որ կրքի և սիրոյ ծագումն անհնարին է դառնում։ Այս պահանջում է ոչ միայն բարոյականութիւնը, այլ և ինքը գիտութիւնը, որը երբէք անբարոյականութիւն չէ քարոզել, և որը ընդհանրապէս աղբիւր է ամեն բարձր և առաքինի զգացմունքների։

Թ. Վահան Արծրունի

ակի էր ընկնում ա. Ազգարովան իր կենդանի խաղով Իզիֆի դերի մէջ. վատ չէր և պ. Նակովլեվ, իսկ պ. Տրուբեցկոյ շատ թոյլ էր և անգոյն Ակասայի դերի մէջ, գուցէ այն պատճառով, որ հիւանդ էր. իսկ ինչ վերաբերում է շրջերին և դեկորացիաներին, պէտք է ասել, որ միջակայն օրինակելի էր. թատրոնում ժողովուրդ քիչ կար։ Նոյն խումբը մայիսի 17-ին ներկայացրեց երկրորդ անգամ «Ոսկի Եւա» կոմէդիան։ Թատրոնը կիսով չափ միայն լի էր։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի երկաթուղու դէպ վրա խոշոր վաճառականութիւն անողների մի մասը պայմանաւորվել է չը պակասեցնել հացի գինը։ Եթէ ներկայ լուրը ճիշդ է, ափսոս այդ վաճառականներին, որոնք վճռել են իրանց գրպանը հարստացնել՝ կարօտ ազգաբնակութեան հացի հաշուով։ Մեզ յայտնել են և այն անձնաւորութեան անունը, որին պատկանում է այդ տխուր գործի նախաձեռնութիւնը... Մինչ ճիշդ է։

—

Այսօր, մայիսի 19-ին, ազնուականների թատրոնում լինելու է մի կոնցերտ՝ յոգուտ երիտասարդ երգիչ Բարխուդարեանի, որը մի քանի տարի է ահա ջանք է գործ դնում՝ դնալու և կատարելագործվելու երգեցողութեան մէջ, բայց միջոցների պակասութեան պատճառով չէ կարողանում հասնել իր այդ զովելի նպատակին։ Կոնցերտին ի միջի այլոց պէտք է մասնակցի յայտնի երգչուհի Մոնտի-Բրունէր, որի անունը անշուշտ յատերին թատրոն կը դրաւի։

—

ՍԱՄԱՐԿԱՆԴԻՑ մեզ գրում են. «Մայիսի 6-ին, առաւօտեան գնացքով, Մերվից այստեղ հասաւ Առտրախանի թեմի առաջնորդ Արխատակէս արքեպիսկոպոս Սեդրակեան։ Հայ ժողովրդի մի քանի ներկայացուցիչներ, դիմաւորելով սրբազանին վագոնում՝ բարի գալուստ մաղթեցին։ Սրբազանն իջաւ պ. Արշակ Մակարեանի տանը, որը նախօրօք պատրաստված էր։ Նոյն օրը սրբազանը այցելութեան գնաց նահանգապետին. կէսօրից յետոյ նահանգապետն էլ փոխ-այցելութիւն տուեց։ Տեսնելով ժողովրդի հոգեոր պէտքերի թերակատար մնալը, Արխատակէս արքեպիսկոպոսը խոստացաւ ուղարկել մի լաւ քահանայ Սամարկանդի և շրջակայ քաղաքային հայերի հոգեոր պէտքերին բաւականութիւն տալու համար։ Մայիսի 9-ին, երեկոյեան, սրբազանը մի քանի ուղեկիցներով յետ դարձաւ դէպի Զարջուա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վիէննայի «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ Զաւադ փաշան ոչ մի աջողութիւն չը գտնելով Պետերբուրգում իրան յանձնած միսիայի վերաբերմամբ, աշխատեց որ գոնէ մի որոշ երաշխաւորութիւն ստանայ Ռուսաստանից Թիւրքիայի ասիական նահանգների ամրոցութեան համար։ Դրա փոխարէն Բ. Դուռը խոստանում է մի քանի զիջումներ անել՝ նեգուցների խնդրում։ Սակայն Ռուսաստանի կողմից յայտնվեց, որ նա օր և է զիջաւորութիւն չունի Փոքր-Ասիայի հայաբնակ նահանգների վերաբերմամբ, այլ ուսաց կառավարութիւնը ցանկանում է միայն, որ Կովկաս փախած հայերը նորից հաստատվեն իրանց տեղերում։ Եւ որովհետև, ինչպէս հաղորդում են Վանի, Էրզրումի և ուրիշ հայ բաղաքների ուսաց հիւպատոսները, Թիւրքիայում ապրող շատ հայեր այժմ էլ ցանկութիւն են յայտնում գաղթել Ռուսաստան, ուստի ուսաց դեսպանատունը հրամանագրել է հիւպատոսներին, որ նրանք խափանեն հայերի այդ գաղթականութիւնը դէպի Կովկաս։

ՊԱՏԵՐԱԶՄ

—

Ամբողջ հետաքրքրութիւնը այժմ կենտրոնացած է Սանտ-Նազարի շուրջը։ Յայտնի է, որ ռուսական նաւատորմը հասել է Կուբայի այդ նաւահանգիստը, բայց թէ ինչ ծրագիր ունի իրագործելու,—առ այժմ յայտնի չէ։ Սանտ-Նազարը թէև Կուբայի ամենամեծ քաղաքներից մէկն է, բայց ունի անյարմարութիւններ։ Նա շատ հեռու է Կուբայի մայրաքաղաք Հաւանայից և գտնվում է կղզու այն կողմում, ուր տիրում են կուբացի ապստամբները։ Հաղորդում են, որ ամերիկացիները չեն հաւատում թէ ծովակալ Սերվերա կարող էր իր վերջնական նպատակ բնտրել Սանտ-Նազարը։ Ամերիկացի փորձված օֆիցէրներից մէկն ասաց. «Մենք երեխաների հետ չենք կռուում։ Ծովակալ Սերվէրա անխելք չէ, իսկ միայն անխելքը կարող է թոյլ տալ, որ իրան պինդ փակեն՝ ինչպէս մի չիշի մէջ թէ Սանտ-Նազարում, թէ մի այլ նաւահանգստում։ Իրաւութիւնը սակայն այն է, որ սպանիական նաւատորմը գտնվում է այնտեղ։ Սպանիայում ծովակալ Սերվերայի այդ գործը ընդհանուր հրճուանք պատճառեց և այժմ արդէն Սերվերան է Սպանիայի առաջին հերոսը համարվում։ Լուրեր էին հասել թէ սպանիական նաւատորմը Սանտ-Նազարից ճանապարհվել է դէպի Հաւանա, բայց այդ լուրը դեռ չէ հաստատվել։ Մի և նոյն ժամանակ Սպանիայում տարածվում են և ուրիշ, աւելի ֆանտաստիական լուրեր։ Ասում են թէ Կուբայի ապստամբները այժմ համաձայն են հնազանդութիւն յայտնել և նրանց ու սպանիացիների մէջ բանակցութիւններ են սկսված։ Մինչդեռ միւս կողմից յայտնի է, որ Կուբայի յեղափոխական հանրապետութեան փոխ-նախագահը, որ ապրում էր Նասայկա կղզում, կանչված է Վաշինգտոն, ուր պիտի վերջնական համաձայնութիւն կայացնվի Կուբայի ապագայի մասին։ Ասում են, որ Միացեալ-Նահանգները հէնց այժմից կը հրատարակեն Կուբայի անկախութիւնը, միայն Կուբայի ֆինանսները կենթարկվեն Ամերիկայի հսկողութեան։

Ամերիկական նաւատորմը այժմ հաւաքվում է Կուբայի ափերում։ Ենթադրվում է, որ ծովակալ Դէվի հրաման կը ստանայ միանալ այդ նաւատորմին։ Միլիոնատէր Աստոր անագին գումարներ է ծախսում նոր նաւեր գնելու համար։ Ամերիկացիները անագին դժուարութիւնների են հանդիպում զօրքեր կազմակերպելու գործի մէջ։ Ամենադիւրաւորն այն է, որ պատերազմի տեղերը այնպիսի կլիմայական պայմաններ ունեն, որ միայն տեղացիներն են կարող տանել։ Այսպէս, հետևեալն են հաղորդում Ֆիլիպինեան կղզիների մասին։ Ջերմաչափը այնտեղ յաճախ ցոյց է տալիս + 52 աստիճան Ռէոմիւրի։ Այսպիսի տաքի մէջ դեռ կարելի է մի կերպ դիմադրութիւն պահպանել, եթէ միջոցները ներում են պահել սառոյց, եթէ բնակարանն ունի հաստ պատեր և հաստ կտուր, որոնք չեն անցկացնում ջերմութիւնը. բայց դրանից հարկաւոր է օրը 3 անգամ սպիտակեղէն փոխել։ Այդ պատճառով նախագահ Մակ-Կինլի չատ աշխատում է, որ Ֆիլիպինեան կղզիները ուղարկելի զօրքերը մեծ մասամբ բաղկացած լինեն նեգրներից, որոնք սովոր են այդ տեսակ կլիմայական պայմաններին։ Սարսափելի զոյներով են նկարագրում և Տամպա քաղաքը, ուր հաւաքվում և կազմվում են ամերիկական այն զօրքերը, որոնք նշանակված են Կուբայի համար։ Դա, ասում են, մի կատաղեալ Սահարա է. ջրի որոյ պաշարը բաւական է միայն 20 հազար մարդկանց համար, մինչդեռ այժմ հարկաւոր է ջուր 700,00 մարդկանց համար։ Նոքը անտանելի է։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Նիւ-Եօրք, մայիսի 13-ին

Ամեն օր, ամենամեծ վաճառականներից սկսած մինչև վերջին խանութը՝ ամեն զոյնի խոշոր տառերով ի ցոյց են դնում պատերազմի բեմից ստացված հեռագիրները։ Թմբագրութիւնների, մանաւանդ «Նիւ-Եօրք Ժիւռնալ»-ի առջև անց ու դարձը անկարելի է։ Այդ լրագիրը, «Մէյն» պատերազմական նաւի խորտակումից թէ առաջ և թէ յետոյ, տենդային եռանդով պաշտպանում է կուբացոց հարցը, նրանց խորտակված իրաւունքները, ամենասոսկալի զոյներով նկարագրում է սպանիացոց գործած տարտղի արարքները, և եթէ նկարագրվածի տասներորդը միայն ուղիղ լինի, Թիւրքիայից յետ չի մնայ...

«Նիւ-Եօրք Ժիւռնալը» կուբացոց դատի վերաբերմամբ ամենալաւ ծառայութիւնն արաւ. առաջինն էր, որ իր հրատապ յօդուածներով ցնցեց Միացեալ-Նահանգները և յուզեց հասարակաց մտքերը և, երբ խորտակված «Մէյն» նաւի վերաբերեալ յանձնախմբի քննութիւնները, որոնք անհամբեր սպասում էին, Մակ-Կինլի յայտնի դիտաւորութեամբ դադարի էր պահում, «Ժիւռնալն» էր, որ իր յարձակողական յօդուածներով ժողովուրդին ոտքի կանգնեցրեց նախագահի դէմ։ Ամեն դասակարգի կողմից արտուներ բարձրացան նախագահի դէմ։ Ամեն օր Վաշինգթոնի կառավարութիւնը հարիւրաւոր նամակներ էր ստանում, որոնք մեծ մասամբ բողոքներ էին Մակ-Կինլիի վարանոտ, անվճռական, տատանվող քաղաքականութեան դէմ։ Միւս լրագիրներն էլ, բայց դլխաւորապէս «Ժիւռնալը», ամենակծու լեզուով քննադատում էին Մակ-Կինլիին, անուանելով նրան անքաղաքագէտ, վախկոտ և անարժան Միացեալ-Նահանգների նախագահութեան պաշտօնին։ Պաշտելի հերոսներ՝ Վաշինգթոնի և Լինքոլնի ոտքերի մօտ նկարում էին Մակ-Կինլիին, որպէս վախկոտ դասակ, որը, կարծես, հերոսների ստուերներից խրտնելով գլուխը կորցրածի նման փախչում էր։ այդ տեսակ ծաղրանկարները անթիւ էին...

Սակայն Մակ-Կինլին ոչ միայն չէր վրդովվում հարիւրաւոր վիրաւորական ցոյցերից, ոչ միայն չէր պատասխանում ակամաւոր անձանց նամակներին, այլ և սենատի անդամներին, որոնք անագին մեծամասնութեամբ պահանջում էին անմիջապէս պատերազմ հրատարակել։ Նա չէր յայտնում իր կարծիքը։ Ցուցումը ծայրայեղութեան էր հասել։ դէմոկրատները խուլ կերպով սպառնում էին նախագահին, որ եթէ դանդաղութիւնը շարունակէ, երիտասարդ Բրայանին նախագահ հռչակելով իրանք պատերազմ պիտի հրատարակեն։ Բայց Մակ-Կինլի այս կարգի սպառնալիքներից էլ անդրդուելի մնաց. նա իր քաղաքականութիւնից մաղաչափ չը շեղվեց։ Եւ այժմ, երբ պատերազմը երկու կողմից բորբոքված՝ թնդանօթները ովկիանոսի ամայութեան մէջ հուր ու մահ են ժայթքում, երբ թշնամին իր ամրութիւնները կործանող ամերիկեան նաւերի առաջից կորաղուի փախուստ է տալիս, այստեղ, Նիւ Եօրքում բոլորովին այլ կերպ են բացատրում Մակ-Կինլիի վարանում, վախկոտ, բայց հեռատես քաղաքականութիւնը։ Մակ-Կինլիի նպատակն էր, ասում են, իր տատանվող քաղաքականութեամբ պատերազմի հրատարակումը ձգձգել մինչև այն աստիճան, որ սկսված արտունջը հասնի ժողովուրդի ամեն խաւերին, որպէս զի ժողովուրդը, պատասխանատուութիւնը իր վրա առնելով հանդերձ, պատրաստ գտնվի ամեն պատահականութեան դէմ յժարական կռուելու։ Մակ-Կինլին, լինելով պատերազմական մարդ, քաջ գիտէ, որ պատերազմը երեխայական խաղ չէ. պատերազմը, մանաւանդ ծովային պատերազմը պահանջում է առաջին ծախս, անագին զինուորական պատրաստութիւն, և առանց այս երկու անհրաժեշտ պատրաստութեան՝ յաղթութիւն չի լինի։ Իսկ այժմ Միացեալ Նահանգների կապիտալիստները հարիւր հազարներով պատերազմի ծախսերը հոգում են և, ի պահանջել հարկին, միլիոնոներով տալու պատրաստ են։ Պատերազմը սկսելուց 10 օր յետոյ՝ 125 հազար կամաւորների կոչ եղաւ. այս կոչին պատասխանեցին 400 հազար անձինք, և չընդունվողները լալով յետ դարձան, Կուբայի ազատութեան ծառայելու բաղդից զրկվելու համար։ Նախագահի երկրորդ նպատակն էր մի կողմից Միացեալ Նահանգների ծովային զօրութիւնը մեծացնել, պատերազմական նաւերը, թնդանօթները և թորփեդոները շատացնել, և միւս կողմից՝ ծովեղերեայ քաղաքները, նաւահանգիստները անառիկ դարձնել։ Այս երկու նպատակին ևս հասել է ամենափայլուն կերպով։ Բացի դրանից, ցանկանալով ժամանակ շահել, նա մտադիր էր հետամուտ լինել եւրոպական քաղաքականութեան, տեսնել թէ պետութիւնները ինչ դիրք կը բռնեն, ինչ աչքով կը նայեն, կամ ինչ չափով կը խառնվեն Կուբայի խնդրին, որպէս զի, ըստ այնմ, Ամերիկան էլ իր պատրաստութիւնները տեսնէր։ Նախագահը այն կարծիքն է ունեցել, որ պատերազմը յետաձգելով, թերևս միջազգային հաշտարար դատարանի միջոցով, առանց արիւն թափելու, կարելի լինի Կուբայի անկախութիւնը ձեռք բերել, իսկ, հակառակ պարագայում, եթէ Միացեալ Նահանգները ստիպված լինեն բռնի ուժով մարդկային արեան հեղմամբ, բաղմաչարչար Կուբայի անկախութիւնը ձեռք բերել, դարձեալ բարոյագէտների կողմից չը պախարակվի, որպէս հեղինակ արիւնհեղութեան։

Եւ այժմ, պատերազմը սկսելուց առաջ՝ Մակ-Կինլիի քաղաքականութիւնը պախարակող, նրան՝ ցեխի հետ հաւասարեցնող լրագիրները և դէմոկրատները, հնօրեայ նրա իմաստուն քաղաքականութեան, ամերիկական բանակների փայլուն յաղթութիւնները տեսնելով, երկինք են բարձրացնում Մակ-Կինլիին։ Տրամադրութիւնը բոլորովին փոխված է։ Հ. Արզումանեանց

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Ադրիանոպոլիս, մայիսի 22-ին

Հաղորդեցի ձեզ «Հանդէս Ամսօրեայի» չափաւոր, բայց կտրուկ և վճռական դիտողութիւնները «Բիւզանդիոնի» վրա։ Այս վերջինը իր մայիսի 6-ի թիւով, ինքզիրը անձնական վերածելով (տկարների զէնքը), և «մշակականների» վրա ալ կոշմնակի յարձակումներ անելով, «Հանդէսի» խմբագիր Հ. Գաբրիել վ. Մէնէվիշեանին ուղղում է հետևեալ «ճառը», որը իր զուարճալիութեան համար օրինակում եմ.

«Կարդ մը դեղանի կիներու համար կըսուի, թէ շատ կը նեղուին և քէն կընեն, երբ մէկն իրենց դեղեցկութիւնը չը գովելու, չը փաղաքշելու չափ անքաղաքավար գտնվի։ Դուք ալ քէն ըներ էք «Բիւզանդիոնին», որ չի գտայիր ձեր միակողմանի և շատ հեղ սոփեստական ծաղկեփունջերուն վրա, և իր կարծիքը շիտակ զրուցելու անկեղծութիւնն ունի։ Բայց ճիշդ այն առթիւ ալ, որ կը փորձէք ձեր վրայէն նեռակ կուսակցական մարդ ըլլալուն արատը, կասպացուցանէք, թէ որքան կոտրվեն տոգորված էք ձեր դիրքին չը վայլող կուսակցական ոգիով մը։ Ապուշի պէս հաստ կընծայէք մշակականներուն չօշափելի սուտերուն և անտեղի զրպարտութիւններուն, որոց վրա հոս (Պոլիս) իրաղեկ ազգային-վաբչական (երևի՝ Օրմանեան, Նուրեան, Բարթուղիմէոս, Վանան վարդապետ...) և լրագրական շրջանակներուն մէջ արդանատանքի ծիծաղով միայն կը պատասխանվի։ Ինչպէս չէք հասկնար, որ մշակականներուն ալ փորին ցաւն այն է, որ Դաւրէժի հռչակաւոր նամակին առթիւ իրենց աղտոտ մտքենայութիւնները նշաւակվեցան «Բիւզանդիոնի» մէջ։ Բայց դուք, որ Պոլիս գտնված էք, և կենթադրվի, թէ կը ճանչնաք ազգային և լրագրական գործերն և գործիչներն, որքան խեղճ դաղափար մը կուտաք ձեր վրա՝ հաված իւղի պէս կուլ տալով այնքան անհաւանական առասպելները, այնքան սուտ պատմութիւնները, առանց գոնէ մէկ անդամ մը հակառակ կողմն ալ մտիկ ըրած ըլլալու։

C'est l'insolence du rien.

«Բիւզանդիոնի» ինչ ըլլալը այնքան ծանօթ է, որ հարկ չեմ տեսնում տառ մ'ալ հերքում գրելու... Այս փաստը, սակայն, մի շատ հետաքրքիր կողմ ունի։ Նա յառաջ է բերում մի ուրախալի երևոյթ, Վիէննայի Մխիթարեաններին զուտ գիտական և բանասիրական օրգանին՝ ազգային մաքուր ոգեղէնցիան։ Պոլսի տաճկաստէր և կեղտոտ թերթին վրա իր յայտնած գաղափարներովը նա կը չափի բոլոր անկախ հայերի համակրանքը։ Մենք յուսով ենք, որ նա կը գիտենայ էլ պահել իր այժմ շահած համակրանքը՝ տեղի չը տալով յարձակումների և ամեն տեսակ զրպարտութիւնների։ M.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Մարգարա, մայիսի 8-ին

Մայիսի 6-ին, հացի թանգութեան պատճառով, անկարգութիւններ տեղի ունեցան այստեղ։ Մինչև այդ օրը այստեղից ցորեն էին արտահանում ուրիշ տեղեր. բայց այդ օրը, կառավարութիւնը տեսնելով ժողովրդի լարված դրութիւնը, պաշտօնապէս արգելեց ցորենի արտահանումը, հակառակ դէպքում անագին տուգանք և պատիժ նշանակելով։ Ցորենի արժէքը համարեա կրկնապատկված է. բայց միայն ցորենը չէ թանդ. թանդ են բոլոր կենսական մթերքները— միս, իւղ, պանիր։ Զբաւոր դասակարգը արդէն զրկման մէջ էր. իսկ վերջերս այդ դասակարգի «կրակի վրա ձէթ ածելացրեց» կղերը՝ իր յորդորներովը։ Եւ ահա ամսիս 6-ին, չը նայած կառավարութեան ձեռք առած միջոցներին, բռնկեց պատրաստված ցոյցը։

Ճիշդ առաւօտեան ժամը 1-ին մի խումբ պարսիկ կանայք և տղամարդիկ, առաջնորդ ունենալով Շարաֆ-խանում անտնով մի կին, յարձակվեցին շուկայի վրա մահակներով, և սկսեցին կողոպտել բաց խանութները, մանաւանդ մսագործներինը և հացագործներինը։ Շուկան խլրդի փակվեց և ամենքը աշխատեցին փախչել մահակների հարուածներից։ Այդ միջոցին վրա հասաւ ոստիկանապետը, բայց նրան էլ թակ ու մահակով ճանապարհ դրին։ Կառավարութիւնը այլ ևս ոչ մի դրական միջոցի չը դիմեց։ Մինչ ցոյցարարների մի խումբը կողոպտում էր ու փակել տալիս խանութները, մի ուրիշ խումբ, ժամը 1½-ին, լցվեց նշանաւոր Ջումա-Մէչիդ կոչված մզկիթի կտուրը և «Եա Ալլահ» գոչիւնով իր շուրջը սկսեց հաւաքել անագին բազմութիւն։ Ապա բոլորը դիմեցին հեռագրատունը, կառավարութեան դէմ բողոքող հեռագիր ուղղելու Ամիր-Նիզամին։ Խռովութիւնը տևեց մինչև երեկոյ։ Դեռ ևս երէկ էլ շուկաները չէին բաց անում, բայց կառավարութեան մի նշանաւոր պաշտօնեայ, անձամբ շրջելով շուկաներում, հրաւայից բանալ բոլոր խանութները, վնասի պատասխանատուութիւնը իր վրա առնելով։ Նա տեսնելով կանանց՝ դուրս արաւ բաղարից։

Այսօր քաղաքը հանդիստ է։

Ամիր-Նիզամը երկու օր շարունակ հեռագրական հարց ու փորձեր անելուց յետոյ, այսօր մի ընդարձակ և խիստ հեռագիր է ուղղել այստեղի դատաւորին։ Ահա դրա համառօտ բովանդակութիւնը. «Հասկացրէք կղերին, որ հանդիստ կենայ. դիմադրութիւններով չեն կարող մեզ մոլորեցնել. ասացէք Մուշտայիդ-ազին, որ հանգստութիւնը չը վրդովի. ապա թէ ոչ կապուած բերել կը տանք Թաբրիզ և կը պատժենք այնպի-

սի պատիմներով, որ մինչև այժմ գոյութիւն չէ ունեցել։ Այդ հեռագրի պատճէնը ուղարկվեց կղերական մարմնին։ Աամն

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 մայիսի։ Այստեղ ստատուրթիւն գործեց ստացված այն տեղեկութիւնը, թէ Շլէյ իր ժամանակին չը կարողացաւ հասնել Սանտ-Եագո, ինչպէս յոյս ունէր ծովային դէպարտամնոր։ Փոխանակ անցեալ կիրակի հասնելու, նա միայն երեքշաբթի դուրս եկաւ Սիէնֆուէգոսից։ Եթէ ծովային դէպարտամնոր 24 ժամվայ ընթացքում չը ստանայ պաշտօնական տեղեկութիւններ ամէրիկական և սպանիական նաւատորմերի գրութեան մասին, համբաւաբեր նաւեր կուղարկվեն տեղեկութիւնների համար։

ԿԻՆԳՍՏՈՆ, 17 մայիսի։ Այստեղ լուր է պտրտում, որ սպանիական նաւատորմը ջարդեց ամէրիկական նաւատորմին Սանտ-Եագո-դէ-Կուբայի մօտ, և թէ ծովապետ Սամպսոն սպանված է։ Այդ լուրը հաստատման է կարօտ։

ՄԱԴՐԻԴ, 17 մայիսի։ Ծովապետ Կամարի նաւատորմը Կադիկսից հեռացաւ, մի քանի օր ծովային զօրահանդէս անելու համար բաց ծովի մէջ։

ՀԱՒԱՆՆԱ, 17 մայիսի։ Սէրվէրի նաւատորմը գտնվում է Սանտ-Եագոի մէջ։ Սամպսոնի նաւատորմի դիմաւոր ոյժերը նրան այնտեղ պաշարում են։ Ամէրիկական նաւերը հեռացան Սիէնֆուէգոսից։ Մնացին միայն մի քանի նաւեր։

ՄԱԴՐԻԴ, 17 մայիսի։ Մանիլայից հաղորդում են, որ ապստամբների պարագլուխ Ագուինալդոյ՝ Դէվէից ստացաւ զէնք և երկու թնդանօթ և ապա յայտարարեց, թէ Ինդն Սպանիայի կողմն է անցնում։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 17 մայիսի։ Հեռագիր Կինգստոնից (Ամայկա)։ «Ամերիկական օժանդակ կրէյսեր «Թարվարդ» հասաւ Կինգստոն այսօր, վաղ առաւօտեան, Սանտ-Եագոից, որտեղից դուրս էր եկել երէկ, կէսօրին։ Նոյն այդ բոպէին ամէրիկական 12 նաւեր կանգնած էին նաւահանգստից դուրս։ Համարեա հաւատացած էին, թէ սպանիական նաւատորմը նաւահանգստումն է։»

ԲՈՍՏՈՆ, 17 մայիսի։ «Bost. Herald» լրագրին Կինգստոնից հեռագրում են. «Տեղեկութիւններ են ստացվում, թէ Շլէյ մտաւ Սանտ-Եագո ջրանցքը, ջարդեց Սկրվէրի նաւատորմը և ռմբակոծում է Սանտ-Եագո քաղաքը։»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 մայիսի։ Լոնդ յայտարարում է, թէ դեռ ես ոչինչ տեղեկութիւններ չէ ստացել ոչ ամերիկական և ոչ սպանիական նաւատորմերի մասին։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 17 մայիսի։ «Herald» Կինգստոնից հեռանալ հեռագիրը ստացաւ։ «Սանտ-Եագոից այստեղ եկած ամէրիկական նաւը հաստատում է այն լուրը, թէ Շլէյ պաշարում է Սանտ-Եագոյ մի կոթ տեղի չէ ունեցել։»

ՆԻՒ-ԵՕՐԿ, 18 մայիսի։ Սամպսոնի նաւատորմը վերադարձաւ Կի-Վէստ։ Շլէյին յանձնվեց շարունակել Սանտ-Եագոի պաշարումը։ Ենթադրվում է, որ Սամպսոն նպատակ ունի յարձակում գործել Հաւանայի վրա։

ՄԱԴՐԻԴ, 18 մայիսի։ Սանտ-Եագոի (Կուբայի) առջև գտնվող ամէրիկական նաւերը անհետացան. որ կողմը գնացին—յայտնի չէ։

Սանտ-Թոմաս (Ֆիլիպպինեան) քաղաքը այրվեց ապստամբների ձեռքով, որոնք մորթեցին կամենդանտին, կամաւորներին, քահանային և ուրիշ սպանիացիներին։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի։ Մայիսի 16-ին Պետերբուրգ հասաւ Բուխարայի էմիրը։ Կայարանում ողջունեցին էմիրին Տուրկեստանի նախկին գեներալ-նահանգապետ գեներալ Վրէվսկի, գէր խաւոր շտաբի ասիական մասի պետը, արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչները և շատ ուրիշ անձինք։ Կայարանից էմիրը գնաց Զմերային պալատ, ուր նրա համար պատրաստված են սենեակներ։

ԼՈՆԴՈՆ, 17 մայիսի։ Գլադստոնի մարմնի Վէստմինստէրեան աբբայութիւնը փոխադրելու հանդէսը կայացաւ՝ մասնակցութեամբ ստորին և վերին պալատների անդամների, օտար պետութիւնների ներկայացուցիչների, պրինցների և պրինցեսների։ Ուէլսի իշխանը և Եորկի դուքսը բռնած ունէին ամպհովանիի փնջերը։

ԲԵՐԼԻՆ, 17 մայիսի։ Պրինց Հէնրիխ երկու նաւերով մայիսի 15-ին հասաւ Պորտ-Արթուր, որտեղից մայիսի 16-ին ճանապարհ ընկաւ դէպի Վէյ-Հայ-Վէյ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 17 մայիսի։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ ճանապարհ ընկաւ շրջանի զօրքերը տեսնելու համար։ Պսկովից Մեծ Իշխանը կերթայ Վարշավա՝ այնտեղ գտնվող գվարդիայի զօրամասերը տեսնելու համար։

ՀՌՕՄ, 18 մայիսի։ Մինիստրների խորհրդում պատահած անհամաձայնութեան պատճառով Վիսկոնտի-Վենոստա յայտնեց, որ հրաժարական է տալիս։ Երեկոյեան Բուդինի խնդիրը ներկայացրեց ամբողջ մինիստրութեան հրաժարականի մասին։ Թագաւորը նոր մինիստրութիւն կազմելը յանձնեց Բուդինին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 15-ին

Լենգոնի վրա 10 ֆունտ արժէ	94 ր.	40 կ.
Ռեյխենի վրա 100 մարկ	46 „	10 „
Գարէկի վրա 100 ֆրանկ	37 „	30 „
Գոլուխմգրեալ	— „	— „
Մաքսային կուպոնները	149 „	— „
Բաքսային գիւկոնտ	6½ „	6½ „
4% պետական բէնտա	101⅜ „	— „
4% ներքին փոխառութեան	100 „	— „
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— „	— „
4½% վիսյակ. գիւղ. հող. բանկի	100½ „	— „
Նոր 5% առաջին փոխառութ.	286 „	— „
Նոյնը „ երկրորդ —	248 „	— „
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	221½ „	— „
5% պետական երկաթուղ. բէնտա	— „	— „
Պետերբ. քաղ. կր. ընկ. օբլ. 5%	101½ „	— „
Մոսկվայի բաղաք. օբլիգացիաներ	100½ „	— „
Օդէսայի — —	100 „	— „
Թէֆլիսի — —	100½ „	— „
Թէֆլիսի կալ. բանկի 6% —	102 „	— „
Նոյնը — — 5% —	100 „	— „
Գուխմայիսի կալ. բանկի. 6%	102 „	— „
Նոյնը — — 5%	100 „	— „

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՓԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարգարտը № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒՄԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ յերեկոյ 4 ժամին և 1 բոպէին։ Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 30 բոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 15 բոպէին։ Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 28 բոպէին։

Մարգարտը № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒՄԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ գէշերվայ 12 ժամ 6 բոպէին։ Թիֆլիս է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 բոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԹՈՒՄ երեկոյեան 7 ժամ 55 բոպէին։ Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 28 բոպէին։

Մարգարտը № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ առաւօտեան 8 ժամ 15 բոպէին։ Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 34 բոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԹՈՒՄ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 34 բոպէին։ Բաթում է հասնում ցերեկվայ 1 ժամ 2 բոպէին։

Մարգարտը № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 բոպէին։ Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 12 բոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԹՈՒՄ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամին։ Բաթում է հասնում առաւօտեան 6 ժամին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԻԵՆԿՈ—10½—11½ ժ.։ կանանց և երեխայոց հ., ծաղկի պատուաստումներ։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒԲԿՈ—1½—2½ ժ. ներքին, և մի-զասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վներական և մորթի հ.

Տ. Ի. ԲՈՒԻԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին հիւանդանոցի վերատեսուչ՝

115—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԳՈՐԾԱԿԱՏՈՒՐ

ՈՐՈՆՈՒՄ Է ՏԵՂ.

Հասցէն՝ Կախետինսկայա փողոց, № 3.

1—2 Ե. Գրիգորեանց

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԻԹԻ

Հայոց կոնսիստորիայի առեղծում նշանակված է սոյն մայիսի 22-ին ԱՃՈՒՐԴ առանց կրկնաձրդի վարձու տալու Մողնու ս. Գէորգ եկեղեցու գաւիթում գտնված երկյարկեայ տունը։ Աճրդին մասնակցողները պէտք է ներկայացնեն գրաւական. իսկ պայմանների մասին կարող են տեղեկանալ կոնսիստորիայի գրասենեակում։

Անդամ կոնսիստորիայի՝ Թադէոս վարդապետ

1—3

ԸՐՔՈՒՆԵԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Երեքշաբթի, մայիսի 19-ին

Մոսկվայի Կօրշի թատրոնի դրամատիկական խմբի արտիստները կը ներկայացնեն

„СЛѢДОВАТЕЛЬ"

կամ. 4 գործ. հեղ. Ն. Ա. Բորիսովի։

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։

ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Երեքշաբթի, մայիսի 19-ին, կայանալու է

ԿՕՆՑԷՐՏ

Բատրի աշակերտ տենօր ԲԱՐԹՈՒԴԱԲԵԱՆԻ

Բարեհաճ մասնակցութեամբ տիկին ՄՕՆՏԻԲՈՒՆԵՐԻ. օր. օր. Նելիզովայի, Միխէիվայի և պ.պ. Տիգրանեանի, Դ—սկիյ և բարիտոն Կրիվաշէեվի։

Տոմսակները ծախվում են թատրոնի կասայում և Սուզանաճեանի երաժշտական խանութում։

Սկիզբը 8½ ժամին 2—2

ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՅԻ

Գաբրիէլեան Մկրտիչ, գրագէտ երիտասարդը, սրտնում է պաշտօն։ Հասցէն՝ Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան գրասենեակ։

3—3

ՖԱՐՐԱՐԻ

„ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆՔԸ"

ամսոյս 15-ին մամուլին յանձնվեց։ Կանխիկ բաժանորդագրվելն է 2 բուբլի։ Խնդրում եմ բաժանորդագրվողները վաղօրոք վերադարձնել լիմ։

2—2 Գաբրիէլ քահանայ Տէր-Գաբրիէլեանց

ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ

Մայիսի 15-ից սկսած, Եւլախ կայարանից մինչև Շուշի և Շուշուց մինչև Եւլախ Զալիսովի մանուտոր բառաձի կառքը՝ կանոնց և ողամարգկանց բաժանմունքներով կը մեկնի Եւլախից և Շուշուց առաւօտեան ժամը 6-ին և կը հասնի Շուշի և Եւլախ երեկոյեան ժամը 6-ին։ Տոմսակները ծախվում են Եւլախում, Պետրոսովի քարվանսարայում։ 3—3

Դիմնազիոնի 9-դ դասարանը աւարտած

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

կամենում է ունենալ դասեր Մանդլիսում կամ մի ուրիշ տեղ. պատրաստում է ամեն առարկաներից փոքր դասարաններում. իսկ թուաբանութիւնից՝ և մեծ դասարաններում։ Հասցէն. Նորաշէնեան փողոց, Բաղրիձէի տուն № 3.

3—3

ՔԱՐԱՇԷՆ ՏՈՒՆ

400 քառ. սաժէն հողով՝ վաճառվում է ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼՈՒՄ, Բէհրութեան փողոցում։ Գինը կարելի է իմանալ Արտաշէս Տայեանցից և Տիգրան Մարտիրոսեանցից։

4—5

ԱՄԵՆԱՑԱՑՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՐՕՑԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՏՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՋԱՁՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԿԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманаіна, ТИФЛИСЪ.

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

14—20

1897 թիւ մարտի 24-ին ԲԱՐՁՐԱԴՈՒՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԻՔԻ հիման վրա ծխանարկի փոխարէն։

ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ ԱՆՇԱՐԺ ԿԱՅՔԵՐԻ

Նշանակած ուէրունական հարկերի բաշխման յատուկ յանձնաժողովը յայտարարում է ի գիտութիւն այն կալուածատէրերի, հասատատութիւնների և վարչութիւնների, որոնց կայքերը ենթարկվում են հարկատուութեան, հետեւեալը։

1) Հարկի բաշխումը և այդ մասին եղած ծախսերը, նշանակված այս 1898 տարվայ համար 119,175 բուբլու քանակութեամբ և նրա հաւելուածը՝ ծախսը՝ 2800 բ. աւարտված են և ի ցոյց դրված յանձնաժողովի գրասենեակում, որը գտնվում է Թիֆլիսի պետական պալատի շինութեան մէջ, որտեղ և հարկատուները կարող են յանձնաժողովի նախագահից ստանալ հարկ եղած բացատրութիւնները։

2) Յանձնաժողովի գործադրած բաշխման վերաբերութեամբ, հարկատուները, սկսած «Кавказъ» լրագրում տուած յայտարարութեան օրից՝ այսինքն մայիսի 12-ից մինչև մի ամիս միասին, կարող են իրանց առարկութիւնները յայտնել յատուկ յանձնաժողովին, իսկ վերջինս վճիռներով բաւարարութիւն չը գտնողները կարող են այդ մի և նոյն յանձնաժողովի միջնորդութեամբ դանգատել նահանգական վարչութիւնը։ Այդ մասին եղած խնդիրները և դանդատները պետական դրոշմաթղթի պէտք չունեն։

Այն անձինք, որոնք կը ցանկանան տեղեկութիւններ ստանալ, անհրաժեշտ է ունենալ այն համարները, որոնցով նշանակված են իրանց կայքերը քաղաքային ցանկագրութեան մէջ։

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻԷՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 27 մայիսի (8 յունիսի) ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԼԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Աղրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ակոսթա, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանց, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարայ։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլզարեանին, Կոլիբեանկենտայա հրապարակ։ ՆՈՎՈՐՈՍԻԲԻՍԿ—պ. Մելխիսեդ Հերշենզոնին։ (և. հ. չ.) 9—20

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Мая 1898 г.

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Меник. ул. № 13